

ՆՈՐ ԳԻՐՔ «Անհերքելի Վկայություններ Եւ Վաւերագրեր»

(1915 թւի Հայոց Յեղասպանութեանը Վերաբերող Աւստրիական Փաստաթղթեր)
Հեղինակ՝ Դոկտ. Արտեմ Օհանջանեան

Օրաթերթիս խմբագրութիւնը ուրախութեամբ ստացել է դոկտ. Արտեմ Օհանջանեանի հեղինակած գերմաներէն «ARME- NIEN, der ver-



schwiegene völkermord» գրքի պարսկերէն թարգմանութիւնը: Գիրքը հրատարակել է «Նայիրի» գրատան մատենաշարով՝ է- դիկ Բաղդասարեանի (է. Գերմանիկ) թարգմանութեամբ, որը կատարել է սոյն գրքի հայերէն թարգմանութեան վրայից:

Դոկտ. Արտեմ Օհանջանեանը ծնւել է 1938 թւին՝ Իրանում: 1964 թւին աւարտել է Աւստրիայի Գեղարվեստից Համալսարանի (Վիեննա) ֆիլմարեստի բեմադրութեան ճիւղը, որից յետոյ հետեւել է պատմութեան եւ ստացել պատմական գիւտութիւնների դոկտորայի գերատիճան: Նա հեղինակն է աւելի քան 80 փաստագրական եւ գեղարվեստական ֆիլմերի, պատրաստած Աւստրիայի հեռուստատեսութեան համար, որոնցից երկուսը եւրոպական միջազգային փառատոներում արժանացել են առաջին եւ մէկը՝

երկրորդ մրցանակների:

Դոկտ. Օհանջանեանը 1982-1995 տարիներին Աւստրիայի ազգային արխիւում եւ ուրիշ հաւաքածոներում ուսումնասիրել է Առաջին Համաշխարհային պատերազմի չրջանից գոյութիւն ունեցող Հայոց Յեղասպանութեան վերաբերող փաստաթղթերը: Այդ ուսումնասիրութիւնների արդիւնքը՝ բաղկացած 12 հատորանոց գերմաներէն փաստագրական հաւաքածոյից, հրատարակել է Վիեննայում, որը մեծ տպաւորութիւն է թողել աւստրիական եւ գերմանական պատմական պիտութիւնների պիտա-հետազոտական շրջանակներում եւ պատճառ դարձել տասնեակ նորանոր ուսումնասիրութիւնների՝ հայկական հարցերի վերաբերեալ, որոնք կատարւեցին եւրոպացի հեղինակների կողմից եւ երեւան հանել աւստրո- գերմանական իշխանութիւնների մեղսակցութիւնը Հայոց Յեղասպանութեան մէջ:



Հեղինակի կատարած երկարատեւ եւ լուռ աշխատանքները մեծ դեր են ունեցել վերջերս Հայոց Յեղասպանութեան հարցը Եղեռնի 85 ամեակի նախօրեակին Աւստրիայի խորհրդարանում արծարծելու խնդրում:

Հայ Դատի ուղղութեամբ դոկտ. Արտեմ Օհանջանեանի կատարած աշխատանքը արժանի է մեծ գնահատանքի:

Ա. Յ.